# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՎԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ

1. Գլխաւոր նպատակ Վանական Դպրոցաց է պատրաստել զաշակերտս վասն Ուսումնարանի Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի առ բարւոք կրթութիւն՝ ի բարձրագոյն ուսմունս կարևորս կուսակրօն, ընտիր, բարեկիրթ և հանձարաւոր Եկեղեցականաց։

### ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ՎԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ

2. Վերատեսուչք Վանական Դպրոցաց են վանահայրք՝ ընդ հսկողութեամբ Առաջնորդաց վիճակացն, յորս Դպրոցքն գտանիցին։

3. Հաստատութիւն և արձակումն Վերատեսչաց լինի ՚ի Վեհափառ Կաթուղիկոսէն ամենայն Հայոց ըստ առաջարկութեան Թեմակալ Առաջնորդին։

4. Պարտաւորութիւն է վերատեսչաց խնամ ունել ամենայն նիւթին և արտաքին պիտոյից Դպրոցացն, և զընթացից նոյին պատասխանատու են Թեմակալ Առաջնորդաց։

5. Տուեալ լինի իւրաքանչիւր վերատեսչի ՚ի վիճակային ատենէ ժապաւինեալ Տումար մի վասն ընդհանուր տարեկան մտից և ծախուց, զոր յետ լնլոյ՝ վիճակային Ատեանն ՚ի վերջ տարւոյն՝ զհամառօտ ցուցակն և ելթ ծախուց և արդեանց հանդերձ պարտուպատշաճ գիտողութեամբ, առաքէ յուսումնական Յանձնաժողովն Սրբոյ Էջմիածնի ՚ի նկատողութիւն։

6. Աղբիւրք կառավարութեան Վանական Դպրոցաց համարին. արդիւնք կալուածոց իւրաքանչիւր վանից, կամաւոր նուէրք բարեպաշտից, արդիւնք ուխտատեղեաց, կտակեալ գոյք անժառանգ ննջեցելոց և մասնաւոր տուրք խնամակալաց կամ ծնողաց այնոցիկ յուսանողաց, որք յետ աւարտելոյ զուսմունս՝ չյօժարիցին մտանել յաշակերտութիւն ուսումնարանին Ս. Էջմիածնի։

7. Եթէ վերատեսուչք նկատիցեն զսակաւութիւն արդեանց ՚ի մատակարարել ըղ ծախս տնտեսական կառավարութեան դըպրոցաց, կամ զպակասել արդեանց վանուցն՝ կարեն յայտնել զայն Թեմակալ առաջնորդաց, որք ըստ հրամանի Վեհափառ Հայրապետին ամենայն Հայոց առաջադրեն վանահայրց յորդորել զհայազգի բարեպաշտ ժողովուրդս ՚ի կամաւոր նուիրատուութիւնս առ անխափան ընթացս Վանական Դպրոցաց։

8. Ընտրութիւն Տեսչաց կախի զանօրինութենէ Թեմակալ առաջնորդաց, որք պարտին յայն պաշտօն կարգել զվարդապետս, որ վկայեալ իցէ յառաքինութեան և յուսումնասիրութեան։ Արթ է նաև նշանակել զարժանաւոր ոմն ՚ի քահանայից կամ ՚ի ժողովրդականաց, եթէ իցեն բարեբարոյք և գիտակք միանգամայն զիւրըմբռնելի եղանակաց դասատուութեան ուսանելի առարկայից Վանական Դպրոցաց։

9. Պաշտօն տեսչաց է հսկել ՚ի վերայ ներքին կառավարութեան Վանական Դպրոցաց, այն է՝ ՚ի վերայ վարուց աշակերտաց յեկեղեցւոջ, ՚ի դասատան, ՚ի սեղանատան, ՚ի ժամս զբօսանաց և առհասարակ միտ դընել բարեմոյն գնացից նոցա և բարոյական քաղաքավարութեան, միով բանիւ ամենայն բարոյական և ուսումնական պիտոյից նոցին, զորոց պարտ է յամենայն դէպս յայտնել վերատեսչին։

10. Ի բացակայութեան կամ 'ի հիւանդութեան վերատեսչաց, փոխանակէն զնոսա տեսուչք։

11. Գործակալն, որ և տնտես կամ ծախսարար, հոգայ զամենայն արտաքին պէտս վանուցն և զուսանողաց, զհանդերձս, զկերակուրս, զգեղորայս և զայլն ամենայն։

12. Գործակալն ընտրի 'ի վերատեսչաց վանական դպրոցաց և պատասխանատու է նմա յամենայն գործառնութիւնս իւր։

13. Հրաւիրեալն 'ի վերատեսչաց 'ի վարժապետութիւն, ունիցի զվկայագիրս օրինաւորս վասն ուսման և բարի վարուց, և վկայեալ իցեն ողջամտութեամբ 'ի հաւատս։ Զպաշտօն կրօնուսուցչութեան վարեսցին առաքինիք և ուսեալ եկեղեցականք։

14. Քանակութիւն ռոճկի և վայելուչ բնակութեան տեղի աշխարհական վարժապետաց կախին զարենկատողութենէ վերատեսչաց։

15. Թիւ վարժապետաց պարտի լինել համաձայն արդեանց իւրաքանչիւր վանուց, բայց ոչ նուազ քան զերիս։

16. Յիւրաքանչիւր ամիս Տեսուչք և վարժապետք ընդ նախագահութեամբ վերատեսչաց պարտաւոր են ժողովել 'ի միասին առ 'ի խորհել զյառաջադիմութենէ ուսմանց, զեղանակաց հեշտընկալ դասախօսութեան, և զայլոց ուսումնական պիտոյից Վանական Դպրոցաց։

ԱՇԱԿԵՐՏՔ.

17. Աշակերտք ընդունին 'ի Վանական Դպրոցս՝ ըստ տնօրէնութեան վերատեսչաց՝ 'ի 1-ն Սեպտեմբերի։

18. Աշակերտք 'ի մտանել իւրեանց 'ի դըպրոցն՝ լինիցին ամաց ոչ պակաս քան զտասն, և ոչ առաւել քան զերեքտասան, և ունիցին զվկայական պատուաստի 'ի բժշկէ և զառողջ կազմուածոյ։

19. Աշակերտք Վանական Դպրոցաց են առհասարակ գիշերօթիկք, և ընդունին ձրիաբար 'ի վանահարց զամենայն կարևոր պիտոյս իւրեանց։

20. Եթէ աշակերտք վասն ծուլութեան և անընդունակութեան իւրեանց առաւել քան զերկուս ամս մնասցեն 'ի միում դասարանի, 'ի բաց արձակին 'ի Դպրոցէն։

21. Աշակերտք յաւարտ ուսմանց երրորդի դասարանին, ընդունին զօրինաւոր վկայական 'ի վերատեսչաց՝ դրոշմամբ վանական կնքոյ և ստորագրութեամբ տեսչին, և վարժապետաց։

22. Աշակերտք՝ որք ունիցին զվկայագիր, վասն յառաջադիմութեան յուսմունս և 'ի բարի վարս, յետ քննութեան յուսումնական ժողովէ, ընդունին յուսումնարանն մայր վանից Ս. Էջմիածնի 'ի կրթութիւն բարձրագոյն ուսմանց կարևորաց վարդապետական կոչման։ Իսկ այնոքիկ՝ որք ոչ յօժարեսցին մտանել յուսումնարանն, պարտաւոր դասնին ըստ տնօրէնութեան Հոգևոր Իշխանութեան ուսուցանել զաշակերտս կամ 'ի նոյն դպրոցի կամ 'ի ծխական դպրոցս, զամս երիս մասնաւոր ռոճկօք։

ՈՒՍՄԱՆԵԼԻ ԱՌԱՐԿԱՅՔ.

23. Երրեակ դասարանք են 'ի դպրոցին,

յերկուս յերկուս ամս ամփոփեալք, որովք և ընթացք ուսմանց սահմանին զամս վեց:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ 1. Աշակերտք յընդունելութեան անդ խմբեանց ի դպրոցն, պարտին գիտել զհայերէն ընթերցանութիւն անսայթաք և զուղղագրութիւն չափաւոր հանդերձ գեղագրութեամբ. զառաջին մասն հայերէն քերականութեան, և կամ անսխալ զհոլովմունս և զխոնարհմունս, զՔրիստոնէական վարդապետութիւն համառօտ, զչորեսին գլխաւոր գործողութիւնս Թուաբանութեան: Իսկ եթէ Թերի երևեսցին ի պահու անաչառ քննութեան ընդունելութեանն ի վերոգրեալ առարկայս, մտանեն ի նախակրթարան Վանական Դպրոցաց և անդ վարժին ի հրահանգս կարևորս զամիս վեց և կամ զտարի մի, և ապա վերստին քննեալք անցանեն ի դասարանն առաջին:

24. Նիւթք ուսմանց Ա. դասատան են՝
Ա. Քրիստ. Վարդապետութիւն միջակ.
Բ. Բ. մասն Քերականութեան Հայոց.
Գ. Համառօտ Պատմութիւն Հայոց.
Դ. Ռուսերէն ընթեռնուլ և գրել.
Ե. Առաջին մասն Թուաբանութեան.
Զ. Բնական Աշխարհագրութ. համառօտ
Է. Վայելչագրութիւն:

Երկրորդ դասատան՝

Ա. Պատմ. Հին և Նոր Կտակարանաց.
Բ. Քրիստոնէական Վարդապետութիւն ընդարձակ.
Գ. Թարգմանութիւն յաշխարհիկ բարբառոյ 'ի գրոցն, և 'ի գրոց լեզուէ յաշխարհիկն.
Դ. Բ. մասն Թուաբանութեան.
Ե. Կրթութ. Թարգմանութեան 'ի Ռուսաց լեզուէ 'ի Հայ և զրուցատրութիւն.
Զ. Քաղ. Աշխարհագրութիւն համառօտ
Է. Երգեցողութիւն Շարականաց:

Երրորդ դասատան

Ա. Պատմութիւն Եկեղեցական.
Բ. Հրահանգք Հայերէն շարագրութեան.
Գ. Պատմութիւն Հայոց.
Դ. Լուծմունք Թուաբանական խնդրոց, հանդերձ կանոնօք հաշուակալութեան.
Ե. Քերականութիւն Ռուսաց լեզուի.
Զ. Ռուսաստանական Աշխարհագրութիւն.
Է. Երգեցողութիւն Շարականաց.

ԾԱՆՕԹ. 2. Վերատեսուչն նկատելով զհանգամանս արգեանց, կարող է յապաւել զառարկայս ուսմանց:

## ՀՈԳԵՒՈՐ ԿՐԹՈՒԹԻՒՆՔ

25. Հիմն դաստիարակութեան Վանական Դպրոցաց պարտի լինել կրթութիւն բարեպաշտ, առաքինասէր և կրօնաւորական կենաց, որոյ վասն լինին տեղի տեղի ընթերցմունք սուրբ գրոց և այլոց ոգեշահ մատենից, և ունկնդրութիւն խրատուց վանահօրն, նոյնպէս հմտութիւն և վարժութիւն եկեղեցական կարգաց:

## ԿԱՐԳ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ

26. Ի ձայն զանգակին յառնեն աշակերտք ամենեքեան յառաւօտուն և 'ի միջոցի կիսոյ ժամու ագանին զհանդերձս, լուանան զերեսս, սանտրեն զհերս. յարդարեն զանկողինս խուցեանց անդանդաղ և լռութեամբ:

27. Ի հարկանել երրորդ զանգակին, տողեալ դասաւորին 'ի դաւթի անդ 'ննջարանացն նոյնպէս լռութեամբ, և 'ի գալ տեսչին և յակնարկել՝ գնան զոյգ զոյգ յեկեղեցի, և կան յիւրաքանչիւր սահմանեալ տեղիս:

28. Յաւարտ ժամերգութեան յետ ամենեցուն ելանեն ուսանողքն յեկեղեցւոյ լռութեամբ զոյգ զոյգ, և գնան յիւրաքանչիւր դասարանս:

29. Յետ կիսոյ ժամու՝ յորում պարտին ընթեռնուլ գլուխ մի 'ի Նոր Կտակարանէն, և ապա զայլ ինչ խրատական գիրս 'ի ձայն, գնան 'ի սեղանատուն և ուտեն զնախաճաշիկ կաթամբ կամ մածնով կամ պանրով, և յաւուրս պահոց միգօք, ապա շրջագայեն 'ի պարտիզի, զբօսնուն և կամ զարմանեն զծառս և զծաղիկունս իբր զկէս ժամու։

30. Ի ձայն զանգակին երթան լռութեամբ 'ի դասարանս, սկիզբն առնեն դասատուութեան, և յաւարտ իւրաքանչիւր դասու՝ առնուն զհանգիստ յիւրաքանչիւր դասարանս և կամ արտաքոյ զքառորդ մի ժամու։

31. Ի պահու օրհնութեան սեղանոյն, աշակերտք առեն փոխ առ փոխ "զԿարձր առնեմն" ըստ կարգին, որ 'ի Ժամագիրս, և ապա մի ոմն յուսանողաց նստեալ 'ի բարձու, ընթեռնու 'ի լուր ամենեցուն գլուխ մի յԱստուածաշունչ գրոց կարգաւ, և ապա խրատական ինչ կամ պատմական գիրս շահաւէտս, ըստ ընտրութեան և սահմանելոյ Տեսչին։

32. Յակնարկել Տեսչին, դադարէ ընթերցուածն, ընթերցողն գնայ 'ի ճաշել, և այլք պատրաստին յառնել 'ի սեղանոյ անտի և գոհանալ։

33. Դարձ արարեալ աշակերտաց 'ի սեղանոյն 'ի բնակարան իւրեանց, զբօսնուն և հանգչին ժամ մի և կէս 'ի ձմերայնի, և ժամս երկուս յամարայնի, և ապա 'ի ձայն զանգակի գնան յեկեղեցի յերեկոյեան ժամասացութիւն։

34. Յետ երեկոյեան ժամերգութեան դառնան 'ի դասարանս, պարապին յուսմունս մինչև ցմտանել արեգական, ապա հանգչին և զբօսնուն մինչև ցժամ ընթրեաց։

35. Գնան յընթրիս 'ի սահմանեալ ժամանակին, յետ այնորիկ, հանգիստ առնուն զմի ժամ, ապա առեն միաբան զհանգստեանն (Նշկեայէ) և լռութեամբ երթան 'ի ննջարանս, ուր բաժանեալ լինին յերկուս։

36. Ի հրահանգս աշխատասիրութեան վարժին ուսանողքն ինքնին հոգալ զանձինս զպէտս արտաքինս, այսինքն է՝ յարդարել զանկողինս, առնել զթեթև ինչ կարկատանս և այլն։

37. Հանդերձք ուսանողաց արտաքինք են՝ վերարկու 'ի սևադոյն կամ 'ի մթնադոյն նիւթոյ, զոր ագանին միայն 'ի գնալն յեկեղեցի և արտաքոյ ուսումնարանին. իսկ սովորական զգեստ նոցին պարեգօտ է՝ նոյնպէս մթնադոյն կամ սև՝ զօդեալ մաշկեղէն գօտիւ, ընդ որով զգենուն 'ի ձմերայնի և բաճկոն ասուեղէն կամ բամբակեայ, ագանին կիսակօշիկս գուլպայիւք, և 'ի գլուխ իւրեանց դնեն գտակ փոքրիկ յորժամ 'ի շրջագայութիւն գնայցեն։

38. Ներքնահանդերձս ունին այնչափ, զի երկիցս եօթնեկի փոխեն զնոսին յամարայնի և միանգամ 'ի ձմերայնի։

39. Փոյթ մեծ ունի Տեսուչն, զի մաքրութիւն հանդերձ անպաճոյճ համեստութեամբ փայլեսցի յուսանողսն, յորոց և խոտի պահանջի մի ագանել երբէք հանդերձ ազնուի կամ պատուական, այլ միշտ մաքուր թէև կարկատուն արդեօք երբեմն։

40. Յաւուրս տօնից և կիւրակէից պարապին ուսանողքն յընթերցումն պէսպէս պի-

տանի գրեանց, 'ի զբօսանս 'ի պարտիզի և յունկնդրութիւն խրատու վերատեսչին կամ տեսչին, այլ և 'ի հրահանգս բեմբասացութեան 'ի մեծահանդէս տօնս։

41. Մեծաւ խնամով խրատին ուսանողքն գնալ ընդ երիցագոյնս իւրեանց խոնարհութեամբ, ընդ հաւասարս եղբայրսիրութեամբ և ընդ ստորնագոյնս քաղցրութեամբ, և ընդ ամենեսին քաղաքավարութեամբ։

42. Գլխաւորն 'ի պատիժս յանցաւորաց և կանոնազանցից՝ է յանդիմանութիւն վերատեսչին առանձինն կամ հրապարակաւ և ապաշխարանք ինչ ըստ յանցանացն թեթեւութեան կամ ծանրութեան. իսկ վերջին և սաստկագոյն պատիժ արտաքսումն 'ի Դպրոցէն առանց վկայագրոյ։ Դանք և հարուածք խափանեալ են բոլորովին։

43. Ո՛չ ումեք ուսանողաց հրաման է ներնջելոյ 'ի ցերեկի զի հեռի լինիցին 'ի դատարկութենէ և 'ի թուլութենէ, այլ շատանան գիշերային քնով։

44. Գինի և օղի չըմպեն երբէք ուսանողքն, բայց եթէ ումեք առ տկարութեան խորհրդով բժշկի առ ժամանակ մի, իսկ զծուխ ձգել արգելեալ է խստիւ ամենեցուն։

# ԿՐՕՆԱԿԱՆ

Ի մեծի աւուր Յայտնութեան Քրիստոսի, վերլուծութիւն բանին Եսայեայ, յետ որոյ եւ հաւաքմունք աստուածաշունչ բանից Թարգման յաւրինեալ ի խորհուրդ Թագաւորաց որ յերկրի, արագ ցուցմամբ եւ իմաստասիրական սահմանաւ շարադրեալ Վահրամ վարդապետի, յորում աւուր աւծեալ ձեռնադրեցաւ Թագաւորն Հայոց Մեծն Լեւոն

(Շարունակութիւն)

Իսկ եթէ ժպրհիցի հրէայն 'ի մարդս ոմանս լուծանել զգրեալս, ցուցցէ թէ՝ ո՛վ ոք 'ի մարդկանէ բաւական եղև ամենեին զամենայն Հոգին ընդունել. զի թէպէտ և կատարեցին գործս ինչ առաւել քան զայլ մարդիկ, որպէս Դաւիթ, Եզեկիա, որպէս ապրեցոյց ազատութիւք զքաղաքն Երուսաղէմ և Զաւրաբաբէլ. սակայն փոքր ինչ և մի իմն իրս, և Աստուծոյ աւգնականութեամբ և զաւրութեամբ։ Եւ այն՝ որ զա-ցանէ կարծէ զասացեալս, զՔրիստոսէ ընդէ՞ր ոչ յանձն առնուցու զնախաձեռնութիւնս, որ թէ զի՛նչ զաւրութիւնս կատարեաց, այն իսկ մարգարէ յայտ առնէ թէ՝ "Իշխանութիւն իւր 'ի վերայ ուսոց իւրոց"։ Եւ ո՛չ այս միայն, այլ և յաջորդք առաջի եղեալ ընթերցուածոյս, ցուցանէ զասացելոցս զաւրութիւն և յանդիմանէ զանամաւթս։ Այն թէ ոչ 'ի կարծ դատեսցի և ո՛չ ըստ խաւսից յանդիմանեսցէ. ահաւասիկ Աստուածութեան է նշանակ։

Յաղագս հրաշափառ խորհրդոյ բոլորանեալ աւուրս լուսոյ և նորոգութեան Աստուածային յայտնութեանս, յոլովք են